**Հաշվետվություն**

**ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի,**
**Վրաստանի Թբիլիսի քաղաք գործուղման արդյունքների մասին**

**Գործուղված անձ՝**
- Վալերիյ Օսիպյան,

**Զբաղեցրած պաշտոնը՝**
- ՀՀ ոստիկանության պետ,

**Գործուղման վայրը և ժամկետները՝**
- Վրաստանի Թբիլիսի քաղաք, 2018թ. դեկտեմբերի 17-ից 19-ը,

**Հրավիրող կողմը՝**
- Վրաստանի ներքին գործերի նախարարություն

**Գործուղման նպատակը և քննարկված թեմաները՝**

- ծանոթություն Վրաստանի ներքին գործերի նախարարությունում իրականացված եւ ընթացող բարեփոխումների, մասնավորապես՝ Պարեկային ոստիկանության, հանցավորության դեմ պայքարի, նշված ուղղություններում օրենսդրական փոփոխությունների ոլորտների, ինչպես նաեւ Վրաստանի օպերատիվ կառավարման 112 կենտրոնի աշխատանքին,

- ծանոթություն երթեւեկության անվտանգության ոլորտի եւ ոստիկանական շարժական պարեկային ծառայությունների կազմակերպման և գործունեության կարգի հետ,

- ծանոթություն Վրաստանի երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում վարչական պատասխանատվության բալային համակարգի և ոստիկանական շարժական պարեկային ծառայությունների կազմակերպման և գործունեության կարգի հետ,

- ՀՀ ոստիկանության եւ Վրաստանի ներքին գործերի նախարարության միջեւ օպերատիվ համագործակցության եւ հետագա փոխգործակցությունն ընդլայնելու հետ կապված հարցերի քննարկում:

**Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

-ՀՀ ոստիկանության պետը հանդիպում է ունեցել Վրաստանի փոխվարչապետ, ներքին գործերի նախարար՝ Գ.Գախարիայի հետ, որի ընթացքում քննարկվել են երկու գերատեսչությունների հետագա փոխգործակցության եւ ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու գործում համագործակցության հարցեր,

- Գործուղման ընթացքում այցելություն է եղել Վրաստանի տարածքային ոստիկանական ստորաբաժանում, հանդիպում է կայացել ստորաբաժանման ղեկավարության հետ: Քննարկվել են երկուստեք հետաքրքրող օպերատիվ բնույթի հարցեր,

-Այցելություն է կազմակերպվել պարեկային ոստիկանություն, որի ընթացքում ՀՀ ոստիկանության պետին ներկայացվել է պարեկային ոստիկանության

կառուցվածքը, գործառույթները, համապատասխան վիճակագրությունը, երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում վարչական պատասխանատվության բալային համակարգը և ոստիկանական շարժական պարեկային ծառայությունների կազմակերպման և գործունեության կարգը,

- Կազմակերպվել է այցելություն նաեւ Վրաստանի ՆԳՆ համատեղ գործողությունների և «112» օպերատիվ կառավարման կենտրոններ: Հանդիպում է տեղի ունեցել ղեկավարների հետ, որոնց կողմից ներկայացվել են կենտրոնների ստեղծման պատմությունը, կառուցվածքը, գործառույթային պարտականությունները և հետագա զարգացման ծրագրերը,

- Վրաստանի ՆԳՆ սպասարկման գործակալության այցելության ընթացքում, գործակալության ղեկավարության կողմից ներկայացվել է գործակալության կառուցվածքը և գործառույթները, ցուցադրվել է երթեւեկության կանոնների խախտման հետ կապված տուգանքների բողոքարկման/վճարման միասնական պատուհանի աշխատանքը,

-Կայացել է ՀՀ ոստիկանության եւ Վրաստանի ներքին գործերի նախարարության ներկայացուցիչների ընդլայնված նիստ, որի ընթացքում քննարկվել են երկու գերատեսչությունների միջեւ փոխգործակցության խորացմանն ուղղված հարցերի լայն շրջանակ:

**Հանդիպման ժամանակ ընդունված Որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Գործուղման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել եւ որոշումներ չեն ընդունվել:

ՀՀ ոստիկանության պետը հրավիրել է Վրաստանի փոխվարչապետ, ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիային պաշտոնական այցով այցելել ք. Երեւան 2019թ. առաջին կիսամյակում:

***ՀՀ ոստիկանության պետ*** ***Վալերիյ Օսիպյան***

***«21» դեկտեմբերի 2018թ.***